

ԹՈՒՐԵՔԻԱՅԻ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ-ԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՏՎՅԱԼ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունն ուշադրությամբ հետևում է Թուրքիայի բանակցությունների գործընթացին ԵՄ-ին անդամակցելու կապակցությամբ: Թուրքիայի և Եվրամիության միջև պաշտոնական հարաբերությունները սկսվել են դեռևս 1959թ. հուլիսի 31-ից, երբ Թուրքիան դիմեց Եվրամիություն անդամակցելու համար: ԵՏՀ-ի նախարարների խորհուրդն ընդունեց դիմումը, և 1963թ. սեպտեմբերի 12-ին ստորագրվեց Եվրոպական համագործակցության պայմանագիր: Հարաբերությունները, որոնք դադարել էին 1980թ. Ռազմական հեղաշրջումից հետո, նոր թափ ստացան 1987թ. գարնանը լիիրավ անդամակցության համար Թուրքիայի դիմումից հետո: Հանձնաժողովը 1989թ. իր պատասխանում նշեց, որ չի կարողանա նոր անդամ ընդունել, մինչև այն չավարտի իր ներքին շուկայական համապատասխանեցման ժամանակաշրջանը:

ԵՄ-Թուրքիա հարաբերությունները նոր կարևորություն ստացան 1996թ.: Մաքսային Միության հիմնադրմամբ: 1999թ Թուրքիան ստացավ թեկնածու երկրի կարգավիճակ: 2004թ. դեկտեմբերի 17-ին, Եվրոպական խորհուրդը որոշեց 2005թ. Թուրքիայի հետ սկսել միավորման վերաբերյալ բանակցություններ:

2002թ. Թուրքիայում իշխանության եկավ նոր կառավարություն: Այս կառավարությունը սկսեց աննախադեպ շարժում դեպի բարեփոխումներ և զգալի առաջընթաց կատարեց, որն անհրաժեշտ էր ԵՄ չափանիշներին համապատասխանելու համար:

Թուրքիայի առջև դրված նախապայմանների մեջ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը տեղ չունի: Եվրոհանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդին միանշանակ հայտարարեց այն մասին, որ Հայաստանի հետ Թուրքիայի խնդիրները թերևս առկա չեն որպես նախապայման, բայց կարող են հայտնվել ասպարեզում Եվրախնտեզրման գործընթացի ընթացքում: (1)

Հետաքրքիր կլիներ համեմատություն անցկացնել 19-րդ դարի վերջի - 20-րդ դարի սկզբի Հայկական հարցի դիվանագիտական դրսևորումների հետ: Եվ պիտի խոստովանել, որ զուտ ձևական-վավերագրային տեսանկյունից այն ժամանակվա իրավիճակն ավելի բարենպաստ էր հայության համար, քանի որ Հայկական հարցի լուծման անհրաժեշտությունը, չնայած և խիստ աղճատված ու փաստորեն խեղաթյուրված տեսքով՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտության հիմնադրույթի ձևակերպմամբ, տեղ գտավ մի

չարք միջազգային իրավական փաստաթղթերում՝ սկսած Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերից, որոնց տակ կար նաև Օսմանյան կայսրության ստորագրությունը:

Մեր օրերում գոյություն չունի որևիցե միջազգային իրավական փաստաթուղթ, որի տակ լիներ թուրքիայի ստորագրությունը և համաձայն որի՝ նա Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու որևիցե ուղղակի պարտավորություն ստանձներ: (2)

Եվ՝ հանկարծ Ստրասբուրգում տեղակայված ԵՄ օրենսդիր մարմինը հաստատեց այլ դիրքորոշում. թուրքիան պետք է ընդունի, որ ցեղասպանություն է գործել, երբ 1914-1918 թվականներին և Օսմանյան կայսրությունում սպանվել է մեկ միլիոնից ավելի հայ: 356 կողմ և 181 դեմ (125 ձեռնպահ) ձայնով խորհրդարանը բանաձև ընդունեց, որ ԵՄ-ին թուրքիայի անդամակցության հարցը կքննվի, եթե միայն թուրքիան կատարի որոշ նախապայմաններ:

Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու մասին Եվրախորհրդարանի բանաձևի M բաժնի 5-րդ կետում ասվում է, որ «խորհրդարանը կոչ է անում Թուրքիային ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, և համարում է այս ճանաչումը Եվրամիություն ընդունվելու նախապայման»: (3)

Քվեարկությունն առաջին դեպքը չէ, երբ Եվրախորհրդարանը սատարում է Հայաստանի դիրքորոշումն այս նուրբ և վիճահարույց հարցում, որը տարածաշրջանում նորմալ հարաբերությունների հաստատման անհաղթահարելի արգելք է դարձել: Սակայն այս անգամ դա տեղի է ունենում պատասխանատու պահին՝ Եվրամիությանը թուրքիայի անդամակցության բանակցություններն սկսվելուց հինգ օր առաջ: (4)

Այնուամենայնիվ, Եվրոպայում որոշ արմատական խմբեր թուրքիայի՝ ԵՄ անդամակցությունը կապում են Հայկական հարցի հետ, և պնդում են, որ թուրքիան չպետք է դառնա ԵՄ անդամ մինչև հայկական պահանջներին պատասխանելը: Հայկական պահանջներից մեկը հայոց ցեղասպանության ճանաչման հարցն է: (5)

20-րդ դարի առաջին միջազգային հանցագործությունը հայոց ցեղասպանությունն է՝ կազմակերպված և իրականացված երիտթուրքական կառավարության կողմից: Կոտորելով հայերին՝ երիտթուրքերը ձգտում էին իրականացնել իրենց պանթուրքական ծրագրերը, այն է՝ «Մեծ թուրան» պետության ստեղծումը: Թուրքերի կողմից իրականացված հայոց ցեղասպանության ճանաչումը սկզբունքային նշանակություն ունի հայ ժողովրդի համար, քանի որ հայոց ցեղասպանությունը կատարվել էր Հայկական հարցը մեկընդմիջ վերացնելու նպատակով, բայց մինչ օրս հայ-թուրքական հարաբերու-

թյունները շարունակում են մնալ տարածաշրջանային ընդհանուր լարվածության ամենաբարդ բաղադրիչը, ինչը ունի օբյեկտիվ հիմքեր: (6)

Տասնամյակներ շարունակ Թուրքիայի պաշտոնական քաղաքականությունը հենված է եղել պատմական անցյալը մերժելու հիմքի վրա, եւ գրեթե անհավանական է թվում կարծել, որ կարճ ժամանակի ընթացքում թուրք հասարակությունը կպահանջի իր կառավարությունից կտրուկ քայլերի դիմել Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար: (7)

Երկու երկրների բարի ցանկությունների եւ դիվանագիտական ձեւակերպումների շրջանակը թույլ է տալիս համադրել հայտարարվող շահերը, իսկ իրական շահերը բախվում են: Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններն անհամաչափ են, քանի որ Թուրքիան ուղղակի է պետք Հայաստանին որպես կայուն զարգացող եւ բարյացակամ հարեւան, իսկ Թուրքիային Հայաստանը պետք է, քանի որ դրա մասին խոսում են ավելի հզոր տերություններ: Մենք ինքներս ենք շահագրգռված այդ հարաբերություններում, իսկ Թուրքիային երբեմն պարտադրում են: Մեր հարաբերություններում կան նաեւ այլ շահագրգիռ կողմեր. դա լոկ Հայաստանի եւ Թուրքիայի ժողովուրդների հարաբերությունների խնդիրը չէ: Երկու պետություններն ունեն ներքին խնդիրներ, եւ այդ հանգամանքը ևս հարաբերությունների կարգավորումը դարձնում է դժվարին:

«Հ նախկին ԱԳ նախարար Վ.Օսկանյանը այն կարծիքին էր, որ ,հայոց ցեղասպանության ճանաչումը այլեւս պատմական հարց չէ Թուրքիայում, այն քաղաքական հարց է համարվում:

«Հ նախկին նախագահ Ռ. Քոչարյանի կողմից 2007թ. փետրվարի 7-ին ստորագրված «Հ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ ամրագրված է, որ «Հետամուտ լինելով Հայոց ցեղասպանության համընդհանուր, մասնավորապես՝ Թուրքիայի կողմից ճանաչմանը և դատապարտմանը, Հայաստանն այն դիտարկում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլև տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի բարելավման և ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում»: (4)

Այժմ, երբ քաղաքակիրթ աշխարհը սկսում է ճանաչել եւ խստագույնս դատապարտել 1914-1923թթ. ցեղասպանության փաստը, ժամանակն է, որպեսզի Հայաստանը ներկայացնի, թե ինչ պահանջներ ունի Թուրքիայից եւ աշխարհից՝ գործընթացը արագացնելու եւ աշխարհին առավել հասկանալի ներկայանալու համար:

Միանություն եւ արկածախնդրություն է այն դիրքորոշումը, որ Թուրքիայից պետք է պահանջել Արեւմտյան Հայաստանը. նախ, այդ ամբողջ

տարածքներում այժմյան տարբեր գնահատականներով ապրում են շուրջ 16-20 մլն. քուրդ եւ նույնիսկ հայկական Սփյուռքը ի վիճակի չէ այսօր բնակեցնել այդ տարածքները՝ քրդական բազմամիլիոնանոց բնակչության սուվերում շննալով: Նման քաղաքականության որդեգրման դեպքում միջազգային հանրության առջեւ կուրվագծվի հայի պատկերը, որպես մի «էքսպանսիոնիստ ազգի», որն իր բոլոր հարևանների նկատմամբ ունի տարածքային պահանջներ՝ անկախ պատմական օբյեկտիվ իրողություններից: Նույնիսկ, եթե ենթադրենք, որ նման քաղաքականությունը զոնե մասամբ կհաջողվի, ապա կարժ ժամանակ անց Հայաստանը կվերածվի տարածաշրջանի ամենառազմակա-նացված եւ մեկուսացված երկրի, իսկ նման հեռանկարը այնքան էլ լուսավոր չէ:

Աշխարհն արդեն ունի մեկ նախադեպ. ճանաչելով հրեաների Հոլոքոստը, միջազգային հանրությունը ստիպված եղավ ստեղծել Իսրայել պետությունը, որը մինչ օրս գտնվում է պատերազմական վիճակի մեջ իր բոլոր հարևանների հետ:

Գոյություն ունի նաև մաքսիմալիստական տեսակետ, որն արտա-հայտում է Կանադայում ՀՀ նախկին դեսպան Ա.Պապյանը. այն է՝ 1920թ. Սեւրի դաշնագրի կենսագործում՝ ՄԱԿ-ի դատական ատյաններ դիմելու ճանապարհով, հիմք ընդունելով, որ միայն 1920թ-ին է Հայաստանը եղել միջազգային իրավունքի սուբյեկտ, ի հակառակ 1921թ. Կարսի պայմանագրի, որտեղ Հայաստանը չի եղել ինքնիշխան, սուվերեն պետություն: 1923թ. կնքված Լոզանի պայմանագիրը, որը պաշտոնապես ճանաչում էր Թուրքիայի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, իր 37-44 կետերում նշում էր, որ Թուրքիան պարտավոր է պահպանել իր տարածքում հայտնված հայկական հուշարձանները, և այդպիսով, Աղթամարի եկեղեցու վերանորոգումը և վերաբացումը որպես զուտ թանգարանային արժեք, հիմնովին հակասության մեջ է մտնում Լոզանի պայմանագրի հետ, քանի որ հայկական մշակութային արժեքը, փաստորեն, կորցրել է իր պատմական նշանակու-թյունը: Համաձայն նույն միջազգային իրավունքի հանրաձանաչ նորմերի՝ հնարավոր չէ չեղյալ հայտարարել որեւէ պայմանագիր մասամբ. կամ այն պետք է գործի իր ամբողջ ուժով, կամ պետք է չեղյալ հայտարարվի՝ ամբողջությամբ: (8)

Եթե նույնիսկ ընդունենք, որ Թուրքիան փոխում է իր վերաբերմունքը Հայաստանի եւ հայերի հանդեպ՝ բացառապես ԵՄ հետ բանակցություններում լրացուցիչ խաղաքարտ ծեռք բերելու համար, որ Սբ.Նաչի վերականգնումը, հայկական պատվիրակության հրավիրումը, բացման արարողության անցկաց-ման ժամանակը եւ մնացած բոլոր նրբություններն այդ մեծ դիվանագիտության

մասնիկներն են: Եվ Եվրոպան հայոց ցեղասպանությունը ճանաչում է ոչ թե հայերի նկատմամբ կարեկցանքից դրդված, այլ՝ իր համար, որ Թուրքիան չդառնա ԵՄ անդամ:

Հայ-թուրքական հարաբերությունները, կամ ցանկացած քիչ թե շատ բարդ խնդիր, ունեն տարբեր բաղադրիչներ տնտեսական, քաղաքական, մշակութային, նաեւ՝ հոգեբանական, սակայն ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում առաջին պլան է մղվել քաղաքական բաղադրիչը՝ հոգեբանական ենթատեքստով. Մեր երկիրը բազմիցս հայտարարել է, որ Եվրոպական ինտեգրումն իր համար արտաքին հարաբերություններում գերակա ուղղություն է: Մենք եւ Թուրքիան Եվրոպայի խորհրդի անդամ ենք, Թուրքիան նպատակ ունի անդամակցել Եվրոպական Միությանը: Կարծում են՝ ակնհայտ է, որ մենք պետք է առկա խնդիրները քննարկենք Եվրոպական ինտեգրման հարթությունում, առկա խնդիրների լուծման դժվարին հանգույցները քանդելու համար պետք է օգտագործենք Եվրոպական արժեքները եւ Եվրաինտեգրման գործընթացը: Չափազանց կարելի է, որ կողմերն ունենան անկեղծ եւ շիտակ վերաբերմունք այս հարթությունում, իսկ դրա բացահայտման համար, իսկապես, եթե կա արժեքային համակարգ ու կան սկզբունքներ, ամեն ինչ շատ հեշտ է դառնում: Սիւս սա է այն կարելի հանգամանքներից մեկը, որը հաշվի առնելով մենք մշտապես, տարիներ շարունակ հայտարարել ենք մենք կարծում ենք, որ Թուրքիայի ձգտումը ԵՄ չափազանց կարելի է, եւ մենք կուզենանք, որ Թուրքիան լինի ԵՄ անդամ, բայց այստեղ կա նաեւ երկրորդ խնդիրը: Ցանկացած երկիր կուզենա, որ իր հարեւանը լինի հստակ արժեքային համակարգի, իր համար ընդունելի սկզբունքների շրջանակներում, լինի կանխատեսելի, հարաբերությունները լինեն ապահով, սա է այն հիմքը, որը մեզ հնարավորություն է տալիս նման ցանկություն արտահայտելու: (9)

ԵՄ-Թուրքիա հարաբերությունները Հայաստանի համար ունեն կարևոր նշանակություն, քանի որ Եվրաինտեգրումը հայտարարված է մեր երկրի արտաքին քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակներից մեկը:

Հայաստանը դրական է վերաբերում Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին, քանի որ դա Հայաստանի շահերից է բխում:

Հայաստանից մեկ ժամ դեպի արևելք Իրանն է, հարավում՝ Իրաքը, իսկ հյուսիսում՝ Վրաստանը: Բայց այս հիմնավոր, բիբլիական ու արևելյան Նոյի երկիրը կարող է ունենալ անմիջական սահման ԵՄ-ի հետ, որը Հայաստանին կընծեռնի գարգացման նոր ուղիներ, եթե միայն Թուրքիային ընդունեն Եվրամիություն: (10)

ԵՄ անդամ երկրների ղեկավարները, ԵՄ տարբեր կառույցների ներկայացուցիչները բազմիցս հանդես են եկել մեզ համար նպաստավոր հայտարարություններով, Եվրախորհրդարանն ընդունել է մեզ համար նպաստավոր բանաձևեր, սակայն ԵՄ-Թուրքիա բանակցությունների ընթացքը նախանշող փաստաթղթում Հայաստանի հետ ուղղակի առնչություն ունեցող որևիցե դրույթ, ի տարբերություն Կիպրոսի, գոյություն չունի: Այդ տեսանկյունից, թերևս, կարող է մեզ համար նշանակություն ունենալ միայն փաստաթղթի այն դրույթը, որը պահանջում է, որպեսզի Թուրքիան բարելավի հարաբերությունները հարևանների հետ: Դա նշանակում է, որ ԵՄ-ն այդ խնդիրներն այսօր առաջնային չի համարում:

Գրականություն

1. Բաց Հասարակության ինստիտուտ «Եվրոպական Ինտեգրացիայի Միջազգային փորձը և Եվրոպական հարևանության քաղաքականության հեռանկարները Հայաստանի համար», Երևան, 2006, էջ 118

2. Ռուբեն Սաֆրաստյան «Եվրամիություն, Թուրքիա և Հայաստան. պատմական աղերսներ և իրական շահեր» 21.11.2005
<http://www.noravank.am/am/?page=analitics&nid=97>

3. Ջոն Հրուզ, Սուրեն Մուսայելյան և Արիս Ղազինյան, ԱրմենիաՆաուի թղթակիցներ, «Եվրախորհրդարանը հորդորում է Թուրքիային ճանաչել ցեղասպանությունը մինչև ԵՄ անդամ դառնալը» 30.09.2005
<http://www.armenianow.com/?action=viewArticle&IID=1045&CID=&AID=1112&lng=arm>

4. "Estimating the change in the Trade Flows Between Armenia and Turkey if the boarder is open" paper presented in the conference "The Economic and Social effects of opening The Armenian-Turkish border" Yerevan, January 2007.

5. Հովհաննես Նիկողոսյան, Խաղաղաշինության և կոնֆլիկտի հարթահարձան ռեսուրսների կենտրոն «Հայ-թուրքական հարաբերությունները և Գեղասպանությունը» 18.04.2007թ <http://www.peacebuilding.am/arm/pages.php?page=point&id=299>

6. Վահե Սահակյան, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը 1915-1965թթ. «Մխիթար Գոչ Գիտամեթոդական հանդես», Վանաձոր, 3/2007, էջ 113

7. Ռուբեն Սաֆրաստյան, Նորավանք Հիմնադրամ, «Թուրքիայի պայքարը հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ» 24. 08. 2008
<http://www.noravank.am/am/?page=theme&thid=&nid=1301>

8. Commission of the EC "Progress Report on Turkey" 2006
http://trade.ec.europa.eu/enlargement/turkey/key_documents-en.html

9. Գայանե Գասպարյան, Armpress, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, ղեկտտեմբեր 20.
<http://www.armpress.com/hhpress/2007/12/20/745/>

10. www.timesonline.co.uk